2023-2028 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի

Ա.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ի

տնօրենի հավակնորդ, պատմական գիտությունների թեկնածու՝

Արգիշտի Մնացականի Վարդանյան

ՄԵՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵԽԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

ԴԵՍՄՈՆԴ ԹՈՒԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան ——— 4
2. Հաստատության առաքելությունը ——— 6
3. Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ ——— 7
4. Դպրոցի մասին թվային տվյալներ ——— 8
5. Հաստատության գործունեության վերլուծությունը և նպատակադրման ոլորտները ——— 10
6. Ըստ դասարանների սովորողների թվի համեմատություն 2017-2018 ուստարվա և 2022-2023 ուստարվա ——— 11
7. Նախադպրոցական կրթություն ——— 12
8. Համակազմի ձեռքբերումներ ——— 13
9. Իրականացված աշխատանքները ——— 14
10. Ժողովրդավարական սկզբունքների կարևորությունը /խորհրդակցական մարմիններ/ ——— 17
11. Դպրոցի համագործակցությունը համայնքի, կրթական կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ ——— 21
12. Կրթության բովանդակություն և որակ ——— 24
13. Տնտեսությունը և նյութատեխնիկական բազան ——— 26
14. Հաստատության գործունեության ուժեղ և թույլ կողմերը ——— 28
15. Հաստատության գործունեության նպատակն ու խնդիրները ——— 34
16. Ընթացիկ և նախորդ տարիների սխեմատիկ վերլուծություն ——— 36
17. Դպրոցի կառավարումը ——— 39
18. Կրթության մատչելիությունը ——— 41
19. Ընտանիք-դպրոց համագործակցություն ——— 42

20. Դաստիարակչական աշխատանքի կատարելագործումը ——————————42
21. Ուսումնական միջավայրը——————————————————————————43
22. Սովորողների առողջության պահպանում, անվտանգ կենսագործունեություն———44
23. Հաստատության նպատակների եվ խնդիրների համապատասխան գործողությունները, ակնկալվող արդյունքը պատասխանատուները, ժամանակացույցը——————————45
24. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները——————————————————————————————54
25. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը——55

ՆԱԽԱԲԱՆ

Ուսուցչի, դպրոցի, կրթական համակարգի առջև պետք է դնել ճիշտ նպատակներ, սահմանելով կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համար աշխատանքի գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք բխում են կրթության ճշմարիտ էությունից: Անբովանդակ վարչարարությունը պետք է տեղ տա գործնական աջակցությանը, քննությունները պիտի կառուցվեն հասարակության համար պիտանի հմտությունների շուրջ, ուսուցչի համար պետք է սահմանվեն ճշմարիտ զարգացման նպատակներ: Սա է կրթական համակարգի կայացման միակ հնարավոր ճանապարհը:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին», «Կրթության մասին», «ՊՈԱԿ մասին» օրենքների, դպրոցի կանոնադրության, «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման Պետական ծրագիր» փաստաթղթի հիմնադրույթներին համապատասխան՝ հիմք ընդունելով դպրոցի նախորդ հինգ տարիների (2018-2023թթ.) գործունեության արդյունքում ունեցած ձեռքբերումները, ուշադրության կենտրոնում պահելով դպրոցում առկա հիմնախնդիրները՝ ուղղված հաջողությունների աստիճանական զարգացմանը և խնդիրների իրատեսական և արդյունավետ լուծմանը:

Հիմք ընդունելով դպրոցի արդեն իսկ ձեռքբերումները՝ ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը:

Ծրագրի նպատակն է առկա իրավիճակի վերլուծության հիման վրա նախանշել դպրոցի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը:

Կրթական գործի կազմակերպման մեջ կարևոր է, որ դպրոցի գործունեության պլանավորումը հստակեցվի ըստ փուլերի և ոլորտների.

1. Հեռանկարային ուղղությունների, նպատակների և խնդիրների սահմանման հիմքում դնել «Կրթության զարգացման պետական ծրագիրը»,
2. Հանրակրթության պետական նոր չափորոշիչի պահանջներով առաջնորդվելը,
3. Զարգացման ծրագրի նպատակն ու խնդիրները սահմանելիս առաջնորդվել նախորդ

հինգ տարիների ծրագրի և նոր ծրագրի շարունակականության սկզբունքով,

4. Սահմանել հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,
5. Սահմանել հիմնական գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտգործողություններն ու միջոցառումները,
6. Սահմանել հիմնական ռազմավարությունները, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
7. Սահմանել ֆինանսատնտեսական գործունեություն,
8. Նախանշել ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքները,
9. Վերահսկողության մեխանիզմների սահմանումը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ սերունդ քաղաքացիական առողջ հասարակության համար:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատվության», «ինտեգրման» անվանված քսանմեկերորդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Միջնակարգ դպրոցի առաքելությունն իր սովորողներին ազգային հենքի վրա տարրական, հիմնական և միջնակարգ որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել այլ ուսումնական հաստատություններում:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝

ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ

Հաստատության անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի Ա.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ.Գեղամավան, 1 փողոց, 1 նրբ., 18 շենք

Էլեկտրոնային փոստ՝ **geghamavan@schools.am**,

Կայք՝ **geghamavan.schoolsite.am**

Հեռախոս ՝094233225

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Գեղամավանի համայնքում միակ դպրոցն է:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ-ի հունվարի 13-ին՝ գրանցման թիվ 87.210.00982: Ուսումնական հաստատությունը գործունեությոն ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ: Կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2010թ-ի օգոստոսի 27-ի թիվ 400-Ա որոշումով, փոփոխությունների է ենթարկվել 31.10.2017թ-ի 303-Ա և 21.11.2020թ-ի թիվ 477-Ա որոշումներով:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 01.07.2010թ.-ի N 683-Ա, 684-Ա, 685-Ա հրամանների դպրոցը ստացել է իրավունք իրականացնելու կրթական ծրագրեր ըստ համապատասխան սահմանային տեղերի՝

Նախադպրոցական կրթական ծրագիր – 18 սահմանային տեղ՝ լիցենզիա № 0079

Տարրական դպրոց - 144 սահմանային տեղ՝ լիցենզիա № 0455

Միջին դպրոց - 179 սահմանային տեղ՝ լիցենզիա № 0446

Ավագ դպրոց - 70 սահմանային տեղ՝ լիցենզիա № 0367

Գեղամավան միջնակարգ դպրոցի՝ որպես հանրակրթական միջնակարգ ընդհանուր կրթություն իրականացնող հաստատություն, գործունեությունն է.

- ✓ Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվձևավորել անհրաժեշտ պայմաններ որակյալ կրթություն ստանալու համար:
- ✓ Ձևավորել հայրենասեր, պետական մտածողությամբ, մրցունակ քաղաքացի, որը կարևորի ազգային խնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
- ✓ Ստեղծել բարենպաստ պայմաններ օժտված սովորողների տարբերակված ուսուցման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթությանկազմակերպման համար:
- ✓ Ընդառաջ գնալով սովորողների նախասիրություններին՝ ստեղծել կրթական միջավայր՝ խմբակների գործունեությամբ, հետազոտական և նախագծային աշխատանքներիխթանման միջոցով:
- ✓ Ծրագրի կատարումը ու իրատեսական արդյունքների ապահովումն իրագործելի է մանկավարժական կադրերի վերապատրաստումների, ատեստավորման, խրախուսման, սովորողների ինքնակրթության զարգացման, շենքային պայմանների, նյութատեխնիկական բազայի ապահովման և համայնքի գործուն մասնակցության շնորհիվ:

Դպրոցի մասին թվային տվյալներ

Դպրոցում առկա են՝

1. Տնօրենի աշխատասենյակ -1
2. ՈՒսուցչանոց-1
3. Դասասենյակներ - 16
4. Լաբորատորիաներ – 2 /կենսաբանություն, ֆիզիկա/

5. Համակարգչային դասասենյակ - 1
6. Գրադարան -2
7. Արհեստանոց-1
8. Մարզահրապարակ – 1
9. Պահակակետ-1
10. Սանհանգույց - 13
11. Կաթսայատուն - 1
12. Մարզադահլիճ-1
13. Ապաստարան

Դպրոցը ունի առանձնացված ՆԶՊ, «Շախմատ» առարկայի դասասենյակ, ԿԱՊԿՈՒ ունեցող երեխաների համար առանձնացված աշխատասենյակ, ԴԱԿ աշխատասենյակ, ժամանակակից գրադարան, հանդիսությունների սրահ, ճաշարան, նախակրթարան։

Դպրոցը ունի նաև արտակարգ իրավիճակներում հրշեջների ազատ ելք ու մուտքի հնարավորություն։

<u>Դպրոցի անձնակազմը բաղկացած է ներքոհիշյալ աշխատակիցներից</u>՝

Վարչական աշխատողներ՝

- ✓ Տնօրեն
- ✓ Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ - 1

Մանկավարժական աշխատողներ՝

- ✓ ՈՒսուցիչ - 20
- ✓ Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ - 1
- ✓ Լաբորանտ - 1
- ✓ Գրադարանավար-1
- ✓ ՈՒսուցչի օգնական - 2
- ✓ Հոգեբան - 1

Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ՝

- ✓ Հաշվապահ-1
- ✓ Համակարգչի օպերատոր-1

- ✓ Հավաքարար - 2
- ✓ Պահակ - 3
- ✓ Ջեռուցման ժամանակահատվածում դպրոցում աշխատում են կաթսայատան 3 հնոցապաններ։

Առաջիկա ժամանակահատվածում նախատեսվում է ավելացնել 1 պահակի և 1 հնոցապանի հաստիք։

Դպրոցում ցանկալի է ունենալ բուժքույր։

Աշակերտների թիվը 2017-2018 ուսումնական տարում եղել է 144-ը, իսկ 2022-2023 ուսումնական տարվա սկզբին 161-ը։ Վերջին հինգ տարվա ընթացքում գրանցվել է աճ։

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Դպրոցի շենքը տիպային է, կազմված երկհարկ երկու մասնաշենքից, որոնք միացված են միջանցքով և մարզադահլիճից։ Դպրոցի նոր շենքը կառուցվել է 1985 թվականին, վերանորոգվել՝ 2007 թվականին։ Դպրոցը նախատեսված է 393 աշակերտի համար։

Դպրոցը 1990թ. նոյեմբերից կրում է հայտնի լեզվաբան, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, դոկտոր պրոֆեսոր և Գեղամավանի պատվավոր քաղաքացի Աշոտ Աբրահամյանի անունը։ 2022թ. նոյեմբերին դպրոցի տնօրեն Արգիշտի Վարդանյանի նախաձեռնությամբ բացվեց մեծանուն գիտնական Ա. Աբրահամյանի անունը կրող անկյունը, որտեղ ցուցադրված են նշանավոր հայագետի հիմնարար աշխատությունները, հոդվածները, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և կառավարության կողմից ստացած պարգևները, նշանավոր գիտնականների հետ արված լուսանկարները, անձնական իրեր։

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով, օրինակելի ուսումնական պլանի հիման վրա տնօրենի կողմից հաստատված ուսումնական պլանով, դասացուցակով և տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանով, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները։

Ըստ դասարանների սովորողների թվի համեմատություն 2017-2018 ուստարվա և 2022-2023 ուստարվա

2017-2018 ուստարի 2-րդ կիսամյակ			2022-2023 ուստարի		
Դաս.	Դասարաններ ի քանակ	Սովորողներ ի թիվ	Դաս.	Դասարաններ ի քանակ	Սովորողներ ի թիվ
I	1	16	I	1	12
II	1	15	II	1	15
III	1	17	III	1	11
IV	1	14	IV	1	19
V	1	9	V	1	13
VI	1	11	VI	1	15
VII	1	18	VII	1	15
VIII	1	13	VIII	1	15
IX	1	8	IX	1	15
X	1	13	X	1	8
XI	1	10	XI	1	9
XII	-	-	XII	1	14
Ընդամենը	11	144	Ընդամենը	12	161
Նախակրթարան	1	12		1	12

2011 թվականից գործում է նաև նախակրթարանը, համայնքում բացակայում է մանկապարտեզը և նախադպրոցական հաստատությունը: Նախակրթարանի բացումը և շահագործումը նոր շունչ հաղորդեց համայնքին:

Նախակրթարանը և տարրական դպրոցի առաջինից չորրորդ դասարանի աշակերտները օգտվում են անվճար տաք սննդից, որը թեթևացնում է ծնողների հոգսը:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում գործող նախակրթարանը՝ 5-6 տարեկան երեխաների ընդգրկմամբ, իրականացնում է նախադպրոցական ավագ խմբի կրթական ծրագրեր։

Նախադպրոցական կրթությունը չափազանց կարևոր դեր է կատարում դպրոցական ուսուցման նախապատրաստման համար՝ ապահովելով սահուն անցում նախադպրոցական կրթությունից՝ հանրակրթություն։

Դպրոցում իրականցվող նախադպրոցական կրթության հիմնական նպատակներ ենք համարում նախադպրոցական կրթությունը նպատակաուղղել յուրաքանչյուր երեխայի՝ մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալ անձնային զարգացումը, ինքնասպասարկումը, սոցիալականացումը, կյանքի հմտությունների ձևավորումն ու զարգացումը աշխարհաճանաչման ինքնուրույնության և ինքնաճանաչման փորձի ձեռքբերումը, երեխայի իրավունքների պաշտպանությունը, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքը։

Անհրաժեշտ է բարձրացնել նախադպրոցական կրթության հանրային նշանակությունը, որակի բարելավման համար ներդնել ժամանակակից կրթական նորարարություններ, ստեղծել հավասար հնարավորություններ յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովում՝ խելամիտ հարմարեցումների միջոցով նպաստելով երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիրակությանը։

Նախադպրոցական կրթության որակի շարունակական բարելավման կարևորագույն պայման ենք համարում նախադպրոցական կրթական ծրագրի իրականացնող մանկավարժական աշխատողների շարունակական կատարելագործումն ու մասնագիտական զարգացումն։ Բարելավվել նախակրթարանի շենքային պայմանները, ուսումնական միջավայրը՝ ապահովվելով երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները, այդ թվում ստեղծելով խելամիտ ֆիզիկական հարմարեցումներ նրանց զարգացման

առանձնահատկություններին համապատասխան, հատուկ տարածքներ երեխաների հետ տարվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման համար։

Նախակրթարանում կիրառվող սարքերը, սարքավորումները, խաղալիքներն ու ուսումնական նյութերը համապատասխանեցնել երեխաների տարիքին, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002թ. «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N2. III. 1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» N 857-Ն հրամանի և ՀՀ կառավարության 06.03.2014 թ-ի «անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և ՀՀ կառավարության 11.11.2004թ. N1551-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 278-որոշման պահանջներին։

Համակազմի ձեռքբերումներ

Մանկավարժական աշխատողներն ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում։ Ուսուցիչներն անցել են և անցնում են համապատասխան վերապատրաստումներ և ատեստավորված են, համապատասխանում են միջնակարգ դպրոցում դասավանդելու չափանիշներին։ Ունենք կամավոր ատեստավորված ուսուցիչ, տարակարգ ունեցող ուսուցիչներ։ Այս 5 տարիների ընթացքում մանկավարժական համակազմը թափուր տեղի մրցույթներով համալրվել է նոր մասնագետներով՝ անգլերեն, ֆիզկուլտուրա, գերմաներեն, հայոց լեզու և գրականություն, ավելացել են նաև նոր հաստիքներ՝ հոգեբան, ուսուցչի օգնականներ։

Դպրոցի գրադարանը համալրվել է գեղարվեստական գրականությամբ։

Դպրոցի շրջանավարտի նկարագիրը

Դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդների հետ համատեղ հարկավոր է դպրոցի շրջանավարտին դաստիարակել այնպես, որ նա ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք տիրապետի Հայաստանի Հանրապետության պետական լեզվին՝ հայերենին։

Դպրոցի շրջանավարտ Գրիգոր Գևորգյանը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ընտրվել է ուսումը Հունաստանում՝ Սալոնիկի մարտական աջակցության սպաների ռազմական ակադեմիայում և Արիստոտելյան համալսարանում շարունակելու համար, իսկ Նվեր Սաղաթելյանը՝ Ջոնս Հոփքինսի համալսարանում՝ ստանալով նաև Օքսֆորդի համալսարանում բակալավրի մեկ տարվա ուսումնառության հնարավորություն:

Աջակցություն մանկավարժներին

- ✓ ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացում,
- ✓ Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram., dasaran.am, imdproc.am,
- ✓ Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում,
- ✓ Էլեկտրոնային մատյանի կիրառում ԿՏԱԿ-ի կողմից,
- ✓ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվում է ուսուցչի օգնականների,
- ✓ ՀՀ ԱԻՆ-ի կողմից կազմակերպվող դասընթացների մասնակցություն,

Մեր մշտական խորհրդատուն և օգնականն է Գեղարքունիքի մարզպետարանը:

Վերջին 5 տարիների կատարած աշխատանքների վերլուծությունը, ձեռքբերումները

Իրականացված աշխատանքները

Ուսումնադաստիարակչական

Դպրոցի ղեկավարման և ուսումնական գործընթացի հիմքում դպրոցի զարգացման ծրագիրն է և համադպրոցական ուսումնադաստիարակչական տարեկան ուսումնական և աշխատանքային պլանները: Վերջինում էլ ամրագրված են ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկողության, մանկավարժական փորձի տարածման և ուսման որակիբարձրացման կոնկրետ անելիքներ, որոնք առանձնացվում են ամսական կտրվածքով և դառնում ողջ անձնակազմի աշխատանքի ուղեցույց:

Ուսումնական գործընթացի, ուսման որակի ստուգման արդյունավետ ձևերից է որևէ առարկայի դրվածքի ուսումնասիրությունը, որի հիմնական վերահսկողները տնօրինությունն ու առարկայական մեթոդմիավորման նախագահներն են, որոնք իրենց դասալսումների, գրավոր ստուգումների արդյունքները ներկայացնում են մեթոդմիավորման նիստերում:

Որևէ առարկայի վարկի բարձրացման գործում մեծ դեր ունեն առարկայական օրերը: Տարեցտարի ուսուցիչներն իրենց առարկան ներկայացնում են առավել հետաքրքիր մտահղացումներով, սովորողների միտքն ու ստեղծագործական ունակությունները զարգացնող նախաձեռնություններով: Առարկայական օրերի ծրագրերում պարտադիր տեղ ունեն համակարգչային դասերը, միջդասարանական մրցույթները, մեթոդական զեկուցումներն ու նպատակային էքսկուրսիաները:

Տնօրինության նախաձեռնությամբ դպրոցում անց են կացվում ստուգարքներ, տարաբնույթ միջոցառումներ, որոնք աշխուժություն են հաղորդում ուսումնական գործընթացին, սովորողներին մղում ինքնազարգացման:

Եթե մշտապես իրենց տառուսուցման արդյունքները ներկայացնում էին 1-ին դասարանների փոքրիկները, ապա արդեն միջոցառումներ են անցկացվում լեզուների ուսուցման առաջին տարում (ռուսաց լեզվից՝ 2-րդ դասարանում, գերմաներենից՝ 3-րդ դասարանում, անգլերենից՝ 5-րդ դասարանում):

Ամենամյա պարտադիր ստուգումներից է կրտսեր դպրոցում ընթերցման որակի ստուգումը՝ մայրենիից և ռուսաց լեզվից: Դասվարների հետագա աշխատանքների կազմակերպման համար կարևոր դեր են կատարում տարրական կրթության մեթոդմիավորման նախագահի կողմից տարեվերջին անցկացվող խոսքի որակի ամենամյա ստուգումները:

Մշտապես ուշադրության կենտրոնում են վկայագրված ԿԱՊԿՈՒ սովորողների հետ տարվող աշխատանքները /դպրոցում այս պահին սովորում են վկայագրված 4 սովորողներ/, որոնք ունեն ձայնի և խոսքի միջին ինտելեկտուալ (մտավոր) միջին խանգարումներ:

Պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակյալ, մատչելի և հասանելի կրթության ապահովում՝ անկախ սովորողների մեկնարկային հնարավորություններից, ընդունակություններից: Ներառական կրթությունը կնպաստի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրմանը կրթական գործընթացին:

2020 թվականին՝ համընդհանուր ներառական կրթության անցման առաջին իսկ օրվանից, դպրոցում կազմակերպվեց և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների բացահայտման և վկայագրման աշխատանքը:

2021 թվականին վկայագրված չորս սովորողների հետ աշխատում է դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խումբը՝ դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի պատասխանատվությամբ, ուսուցչի օգնականների, ծնողների մասնակցությամբ:

Մշտապես դպրոցը ստանում է Գեղարքունիքի մարզի ՏՄԱԿ-ի աջակցությունը:
Որպես արտաքին գնահատման կարևորագույն բաղադրիչ՝ մեր ուշադրության կենտրոնում են սովորողների հետ տարվող աշխատանքներն ու նրանց ձեռքբերումները:

Առարկայական օլիմպիադաների նախապատրաստումը դպրոցում սկսվում դեռ տարեսկզբից. ձևավորվում են օլիմպիական խմբեր, կազմակեպվում են լրացուցիչ աշխատանքներ: Իհարկե, դեռ չենք կարող հպարտանալ հանրապետական փուլի մասնակցությամբ, բայց ունենում ենք մարզային փուլի մասնակիցներ:

Ամեն ուստարվա սկզբին՝ մինչև սեպտեմբերի 5-ը, դպրոցը կատարում է ամենամյա ներքին գնահատում՝ ընդգրկելով բոլոր ոլորտներում կատարած աշխատանքները:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ /ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ/

- ✓ Ձևավորված են և ակտիվորեն գործում են աշակերտական խորհուրդն ու ծնողական խորհուրդները, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության և մանկավարժական համակազմի հետ:
- ✓ ԱԽ-ն հանդես է գալիս նախաձեռնություններով, ստեղծված հանձնախմբերը հանդես են գալիս սեփական նախաձեռնություններով, անցկացնում ինքնուրույն միջոցառումներ, սպորտային մրցումներ, հանդիպումներ համայնքի դպրոցների հետ, այցելություններ կազմակերպում գրադարաններ, մշակութային օջախներ:
- ✓ Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, անկաշկանդ ներկայացնում և քննարկում է իրենց պլանները տնօրենի հետ:
- ✓ ԱԽ իր ակտիվ մասնակցությունն ունեցավ 44-օրյա պատերազմում Գեղամավանցի նահատակված՝ զինվորներին նվիրված դասասենյակի անվանակոչմանը, պաստառների պատրաստմանը և ծառատունկին:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մանկավարժական խորհուրդը կազմավարվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Ձևավորվում է տնօրենի հրամանով ՝մեկ ուսումնական տարի ժամկետով:

Մանկավարժական խորհուրդը ԿԳՄՍ նախարարության սահմանած կարգով՝ իր կազմից,փակ,գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի անդամներ:

Մանկավարժական խորհուրդը կատարում է դպրոցի կանոնադրությամբ իրեն

վերապահված գործառույթները /քննարկումներ, որոշումներ/: Նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Անդամներ են համարվում դպրոցի բոլոր մանկավարժները /մինչև քառասուն մանկավարժ ունեցող դպրոցներում բոլոր մանկավարժական աշխատողները համարվում են մանկավարժական խորհրդի անդամներ/: Խորհրդի նիստերը բաց են: Անհրաժեշտության դեպքում նիստերին մասնակցում են ծնողներ, աշակերտական խորհրդի անդամներ: Քննարկում և որոշումներ են ընդունում ուսումնադաստիարակչական, զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում ընթացիկ հարցերին և ընդհանուր պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, պայքարում ուշացումների դեմ, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ,ճանաչողական այցեր:

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք աշակերտների կողմից բարձրացված հարցերի խորը և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:

Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակացական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարվում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի ծնողխորհուրդը գործում է համաձայն դպրոցի կանոնադրության։ Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին դասարանական ծնողխորհդի նախագահներից ձևավորվում է դպրոցի ծնողխորհուրդը, որոնցից էլ ընտրվում է ծնողխորհրդի նախագահը։ Ծնողխորհուրդը ակտիվ մասնակցություն է ունենում արտադպրոցական նախաձեռնությունների կազմակերպմանն ու անցկացմանը, աջակցում է դասվար-դասղեկներին էքսկուրսիաների կազմակերպման, անապահով ընտանիքների սովորողներին օգնություն ցուցաբերելու և դասարաններում առկա խնդիրները վերհանելու գործում։ Դպրոցում անհրաժեշտությունից ելնելով ծնողների կողմից իրականացվում են դասալսումներ։ Մի շարք ծնողներ մասնակցել են դպրոցում իրականցվող մասնակի վերանորոգման աշխատանքներին։

Սովորողների կրթության գործում մեծ է ծնողի դերը։ Ծնողների հետ տարվող աշխատանքում կձեռնարկեմ հետևյալ միջոցառումները

Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ, որտեղ կներկայացվեն դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադասիարակչական աշխատանքների մասին

1. Ծնողներին ներգրավել դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպմանը, արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին
2. Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը
3. Ծնողներին ներգրավել երեխաների արտադպրոցական և արտադասա- րանական աշխատանքներում
4. Ապահովել ծնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ, փորձել միասին գտնել խնդիրների լուծման ուղիներ, գործել բաց, թափանցիկ
5. Ծնողների համար կազմակերպել միջոցառումներ, կինոդիտումներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ։

Այս ամենի արդյունքում ամրապնդել ծնող-դպրոց կապը:

<u>Ծնողական խորհուրդը</u>՝ թվով 12 անդամներ, մշտապես իրազեկ են և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, համաձայն օրակարգային հարցի, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարվում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև համավարակի պայմաններում: Նրանց հետ կապն իրականացվել է առցանց՝ սոցիալական տարբեր հարթակներում:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ



Դպրոցի 2023-2028 թթ. զարգացման ծրագրում նախատեսում եմ իրագործել մանկավարժական համակազմի որակական բարելավում:

Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքի որակական բարելավումը:

Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:

Շահագրգռել մանկավարժներին կատարելու հետազոտական աշխատանքներ, նաև խրախուսել արտադպրոցական միջոցառումներին հաղթող աշակերտների ուսուցիչներին, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:

«Գագարին» ներդրումային ծրագրի, «Դար» հիմնադրամի աջակցությամբ արևմտահայերենի, բարբառների ուսումնական նախագծերով ամբողջական մայրենիի ուսուցում, օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացում, «Իրական դպրոց» ծրագրին մասնակցություն:

Աջակցել մանկավարժներին մասնակցել պարտադիր և կամավոր ատեստավորումներին

Դպրոցի համագործակցային դաշտ

- ✓ Դպրոցը այս տարիների ընթացքում ակտիվ համագործակցել և համագործակցում է կրթամշակութային հաստատությունների հետ: Ակտիվորեն կազմակերպվել են բազմաբնույթ նախաձեռնություններ, այցելություններ կինոթատրոններ, թանգարաններ, համերգասրահներ, պատկերասրահներ, տարբեր զորամասեր: Համագործակցել ենք ԱԻՆ-ի /տարհանումներ/ և Սևանի տարածքային Ոստիկանության անչափահասների բաժնի հետ:
- ✓ Ակտիվ է համագործակցությունը «Այբ» հիմնադրամի կողմից կազմերպած «Կենգուրու» և «Մեղու» առարկայական մրցույթներին:
- ✓ Ակտիվ է դպրոցի մասնակցությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հայտարարված և կազմակերպված տարաբնույթ ռազմամարզական մրցումներին, շարադրություններին, ասմունքի մրցույթներին:
- ✓ Դպրոցը «Գագարին» նախագծի շրջանակներում ակտիվ համագործակցում է «Դար» հիմնադրամի և «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետ՝ մասնակցելով տարաբնույթ միջոցառումների:
- ✓ Դպրոցը համագործակցում է ԳՊՀ-ի և ԵՊՀ-ի հետ:

Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ

2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում բազմաբնույթ են եղել դպրոցի արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները՝ միջոցառումներ, ցուցահանդեսներ, անկյան ստեղծում, ճանաչողական էքսկուրսիաներ, այցեր, հանդիպումներ, ռազմամարզական մրցումներ։ Միջոցառումները եղել են թեմատիկ, գեղագիտական, դաստիարակչական, ռազմահայրենասիրական, հոբելյանական բնույթի։ Դպրոցում միշտ հիշվել և նշվել են գրեթե բոլոր հիշարժան օրերը, պետական և եկեղեցական տոները։

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԱԿ

Կրթության բնագավառի գերխնդիրը կրթության որակի բարձրացումն է։

Բարձրակարգ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է օգտագործել ուսուցման կազմակերպման ժամանակակից լավագույն մեթոդները, ազգային դպրոց ստեղծելու անհրաժեշտ սկզբունքներն են.

- ✓ Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա
- ✓ Սովորողի դաստիարակություն՝ ազգային-բարոյական նորմերով
- ✓ Գիտելիքների մատուցում՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան
- ✓ Մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան
- ✓ Ուժեղացնել միջառարկայական համագործակցությունը
- ✓ Յուրաքանչյուր սովորողի մոտ սեր և նվիրում առաջացնել կրթության նկատմամբ՝ ցույց տալով բարեկեցիկ կյանքով ապրելու իրական ուղին, որն անցնում է դպրոցում։

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և համամարդկային այլ արժեքների կարևորությունն ունշանակությունը և լինի դրանց կրողը։

Իմ առջև խնդիր եմ դնում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ և նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը։

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում են նշվում հետևյալ հիմնական կետերը

- ՀՀ Հանրակրթական նոր չափորաշիչի պահանջներին համապատասխան սովորողի մոտ հիմնական կարողունակությունների զարգացում

- Կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում
- Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում
- Ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում
- Բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ:
- Կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում:
- Մանկավարժական աշխատողների մասնագիտական կոմպետենտության ձևավորում՝ինքնավերլուծություն և կարիքի գնահատում, ինքնազարգացման պլանավորում, ինքնադրսեվորում, վերլուծություն,ինքնաուղղում
- Մանկավարժի տեղեկատվական կոմպետենտության ձևավորում

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը իրականացնում է 12-ամյա տևողությամբ եռաստիճան միջնակարգ կրթություն՝ գլխավոր շեշտը դնելով կրթության որակի վրա: Թեև վերջին տարիներին կրթության որակի հիմնախնդիրն առավել շատ քննարկվող հարցերից մեկն է, և դպրոցը նախորդ ուսումնական տարում 100% առաջադիմության հետ ապահովել է 42% որակ, նոր չափորոշիչների ներդրմամբ ակնկալում եմ կրթության որակի շեշտակի բարձրացում:

- Կրթության որակ, կրթության որակի բարելավում հասկացությունները առաջադրում են ունենալ որակյալ մասնագետներ, հմուտ մանկավարժներ: Հենց նրանք են կրթության որակի բարձրացման, բարեփոխումների հաջողության ապահովման խթանիչները:
- Կրթության որակի առավել վստահելի ցուցանիշներից կարելի է նշել նաև շրջանավարտների ընդունվելը բարձրագույն ուսումնական հաստատություններ, դպրոցի աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին, առանձին մրցույթներին, ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին, որտեղ դպրոցի սովորողները արժանացել

են մրցանակների, պատվոգրերի և գրավել պատվավոր տեղեր և այլն։

- Կրթության որակի կարևոր ցուցանիշ է նաև շահառուների, այսինքն՝ սովորողների և ծնողների բավարարվածության աստիճանը, սակայն դրա ուսումնասիրմանը և վերլուծմանը, որպես նոր մոտեցում և պահանջ առայժմ քիչ է ուշադրություն դարձվել։ Այնուամենայնիվ, սովորողների, ծնողների կողմից դրական արձագանքներն առավել շատ են։
- Դպրոցում պետք է սահմանել ուսումնական գործընթացի նպատակներն ու խնդիրները, պետք է կիրառել համապատասխան տեխնոլոգիաներ, ուսուցումը համապատասխանեցնել աշակերտների կարիքներին, ապահովեռլ անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական փաստաթղթերով, պահանջվող սարքավորումներով և գույքով։ Ուսումնական, մանկավարժական, դաստիարակչական և կառավարման կազմակերպման արդյունավետությամբ արտացոլվում է.
    - ուսուցման որակի բարձրացումը,
    - աշխատանքային կարգապահության բարձրացումը։

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ներկայումս միջոցներ են ձեռնարկվում դպրոցի նյութատեխնիկական բազան թարմացնելու և համալրելու նպատակով։

Դպրոցի ջրամատակարարման համակարգը և սանհանգույցները աշխատում են խափանումներով, քանի որ համայնքից եկող ջրագիծը, ոչ բարվոք վիճակում է և գործում է ընդհատումներով, կոյուղին նույնպես գտնվում է ոչ բարվոք վիճակում։ Չնայած դպրոցը ջեռուցվում է լոկալ համակարգով, դեռ աշխատում է, սակայն այդ համակարգը մաշված է և կարիք ունի վերազինման։

Ուսումնական միջավայրը կարիք ունի արդիականացման և ուսումնանյութական միջոցների համալրման։ Որակյալ ուսում և ժամանակակից կրթություն ապահովելու համար առաջնահերթ պայման է կրթական միջավայրի բարելավումը։

Վերոնշյալ քայլերի արդյունքում նախատեսում եմ հետագայում ձևավորել

առարկայական կաբինետներ, դրանք համալրել ժամանակակից ՏՀՏ միջոցներով և դիդակտիկ պարագաներով:

Առաջնահերթություն է համալրել գրադարանային ֆոնդը, համալրել նյութատեխնիկական բազայով, ստեղծել ընթերցասրահի գործունեության ծավալման և համացանցից օգտվելու անհրաժեշտ պայմաններ: Հնարավոր է նաև ծառայություններ մատուցել բոլոր շահառուների, այդ թվում՝ համայնքի բնակիչների համար:

Ինտերնետ կապի բարելավումն ու բավարար քանակի համակարգիչներով, այդ թվում նաև դյուրակիր համակարգիչներով և անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրումը, տարբեր առարկաների դասավանդման ընթացքում կնպաստեն ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Վերլուծելով նախորդ հինգ տարիների կատարված աշխատանքը՝ ներկայացնում եմ դպրոցի ուժեղ և թույլ կողմերը.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	
1. Դպրոցը ունի լավ շենքային պայմաններ, տարածքն առանձնացված է ցանկապատով 2. Դպրոցն ունի պահակակետի ծառայություն 3. Դպրոցն ունի կանաչապատ տարածք 4. Դպրոցն ունի բավարար վիճակում գտնվող ապաստարան 5. Դպրոցն ունի լոկալ ջեռուցման համակարգ 6. Դպրոցն ունի պահուստային ելքեր 7. Ամբողջովին փոխված են պատուհանները եվրոպատուհաններով 8. Վեբ կայք։ 9.Ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում է դպրոցի առօրյան։ 9. Դպրոցը ունի արհեստանոց 10. Համակարգչային հագեցվածություն 11. Առկա է «Արմաթ» լաբորատորիա ճաշարան, ՆԶՊ, շախմատի դասասենյակներ։ 12. Լիարժեք գործում են 1 գրադարան և 1 ընթերցասրահ։	1. Տարրական մասնաշենքում սանհանգույցների մի մասը արդեն գտնվում է ոչ բարվոք վիճակում 2. Լաբորատորիաների նոր գույքի պակաս 3. Շենքային պայմանները համապատասխանեցված չեն ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին 4. ԿԱՊԿՈՒ սովորողների համար թեքահարթակի ակայություն 5. Պահակակետում տեսախցիկների հսկողության բացակայություն 6. SMART գրատախտակների բացակայություն 7. Նախակրթարանի սովորողների համար նախատեսված առանձին մուտք
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն	

1. Դպրոցը պետ. բյուջեից ստանում է կայուն ֆինանսական միջոցներ։ 2. Դպրոցն ունի տնտեսված ֆինանսական միջոցներ 3. Աշխատավարձի, հարկերի ժամանակին և կանոնավոր վճարում։	1. Դպրոցն ունի նվիրատվությունների, բարեգործությունների և լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք։
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը	
1. Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, որոնց վարույթը կատարվում է կարգերի պահանջնե-րին համապատասխան։ Փաստա-թղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 08.09.2020թ. N 28-Ն հրամանի։	
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	
1.Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարմանմարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժականխորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքներ։	Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ
Մանկավարժական համակազմ	

1. Դպրոցում անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժետ կարո-ղություններ, բարձր որակավորում ունեցող, ոլորտում առաջատար ուսուցիչներ են 2. Անգլերեն լեզուն դասավանդվում է սկսած 5-րդ դասարանից 3. Ուսուցիչների փոխհամագործակցություն 4. Կամավոր ատեստավորում անցած ուսուցչի առկայություն: 5. Համագործակցություն «Գագարին» նախագծին, փորձի փոխանակում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետ և տարաբնույթ միջոցառումների մասնակցություն 6. Ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ 7. Դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի անդամների վերապատրաստում: 8. ՏՀՏ կիրառման լայն հնարավորություններ 9. Տարակարգ և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ	1. Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ 2. Միջազգային վերապատրաստումների պակաս 3. Որոշ առարկաների մասով ուսուցիչների արտահոսք:

Աշակերտական համակազմ	
1. Բարձր կարգապահություն 2. Դպրոցի նկատմամբ ջերմ և նվիրված վերաբերմունք 3. Հարգանք ուսուցիչների նկատմամբ 4. Դպրոցի ավանդույթների պահպանում 5. Միջոցառումներին մասնակցելու պատրաստակամություն 6. Մասնագիտական կողմնորոշում 7. Սպորտի նկատմամբ հետաքրքրություն	1. Ընթերցանության հանդեպ հետաքրքրության պակաս 2. Սոցիալական կայքերից,հեռախոսներից կախվածություն 3. Բնագիտական և ճշգրիտ առարկաների նկատմամբ հետաքրքրության պակաս։ 4. ՈՒսման ոչ բարձր որակ։ 5. Արտադասարանական խմբակների առկայություն
Համագործակցություն	
1. Ուսուցիչ-աշակերտ ակտիվ համագործակցություն 2. Դպրոց-ընտանիք համագոր-ծակցություն 3. Դպրոցը համագործակցում է տարածքի տարբեր կրթական, մշակույթային, սպորտային հաստատությունների, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետ։	1. Համագործակցություն արտերկրի դպրոցների հետ 2. Համագործակցություն նախկին տարիների շրջանավարտների հետ։

Հնարավորություններ	Խոչընդոտներ (ռիսկեր)

1. Ուսուցիչների ուժեղ և պատրաստակամ թիմ 2. Խելացի, ձգտող աշակերտական կազմ 3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորություն 4. Ֆինանսական գործընկերներ (հովանավորներ) ձեռք բերելու մեծ հավանականություն 5. Փորձի փոխանակման նպատակով, միջազգային համագործակցության մեծ հավանականություն:	1. Համավարակ 2. Պատերազմ:

ՆԱԽՈՐԴ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	
2018թ. 1. Հուլիսին ձեռք բերվեց ձայնարկիչ	
2019թ. 1. Ապրիլին ձեռք բերվեց դասարանային երկու կոմպլեկտ գույք, կաբինետային 22 սեղան, 44 աթոռ, կաթսայատան 1 տոննա տարողությամբ բակ: 2. Սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին վերանորոգվեց կաթսայատան 116մ. ջեռուցման և 58 մ. խմելու ջրի խողովակաշարը:	
2020թ. 1. Օգոստոսին հիմնովին վերանորոգվեց ճաշարանը, ձեռք բերվեց ճաշարանի սեղան, աթոռ, ինչպես նաև ճաշարանի՝ խոհանոցային գույք: 2. Սեպտեմբերին դպրոցը ձեռք բերեց 25 միլ. 570 հազար ՀՀ դրամ արժողությամբ «Արմաթ» լաբորատորիան: 3. Կորոնավիրուսային հիվանդության պաշտպանիչ պարագաների ձեռքբերում: 4. Նախակրթարանի համար ձեռք է բերվել սեղան և աթոռ, ՄԱԿ-ի և բարերարների ջանքերով:	

2021թ. 1. Ապրիլին ձեռք բերվեց բազմոց, խոտհնձիչ: 2. Իրականացվել է ծառատունկ: 3. Դեկտեմբերին ձեռք բերվել ագրեգատ (ժես):	
2022թ. 1. Մարտի 25-ին «Հայ դպրոց» հիմնադրամի ջանքերով դպրոցը ստացավ 27 կոմպլեկտ սեղան, 174 աթոռ, 10 հատ ուսուցչական սեղան, 10 հատ ուսուցչական աթոռ, 15 հատ գրատախտակ, 11 հատ կախիչ: Ստացված գույքն աննախադեպ էր դպրոցի նոր շենքի բացումից ի վեր: 2. Սեպտեմբերին համագործակցություն «Գագարին նախագծի» շրջանակներում՝ դպրոցին նվիրվել է նվագարկիչ, դաշնամուր, կարի մեքենա: 3. Սեպտեմբերին տեղադրվեց խմելու ջրի 3 լվացարան իր սարքավորումներով : 4. Դասասենյակների դռներին տեղադրվել են փականներ, կատարվել են թարմացումներ:	
2023թ. Փետրվարին ձեռք բերվեց 12 կոմպլեկտ պահարաններ: Մարտին վերանորոգվեց ուժեղ քամիների հասցված	

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է 2023-2028 թթ. ընթացքում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած խնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն և կրթօջախի առաջընթացին՝ ժամանակի նորարարություններին համընթաց: Իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման հիման վրա սահմանվել են զարգացման ծրագրի նպատակներն ու համապատասխան խնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը կոչված է ապահովելու դպրոցի բարեփոխումների նպատակով առանձնացված հետևյալ խնդիրների լուծումը՝

1. Ուսման արդյունավետության բարձրացում:
2. Դպրոցի նյութատեխնիկական բազայի անընդհատ հարստացում, ամրապնդում:
3. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ և ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ստեղծում:
4. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակի բարձրացում, անընդհատ վերապատրաստումների կազմակերպում, այդ թվում՝ միջազգային, փորձի փոխանակման նպատակով մանկավարժների գործուղումներ տարածաշրջանի առաջատար դպրոցներ:
5. Արտաբյուջետային հոսքեր ապահովելու նպատակով համապատասխան քայլերի ձեռնարկում:
6. Ձեռնարկել միջոցներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:
7. Դպրոց-ընտանիք-համայնք կապի ամրապնդնում:
8. Դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդակցական մարմիններին, ստեղծել շրջանավարտների, հոգաբարձուների խորհուրդներ և

օգտագործել ռեսուրսները։

9. Սովորողների առողջության պահպանում, անվտանգ կենսագործունեության ապահովում։

Դպրոցի նպատակն է մինչև 2028 թ. դառնալ ժամանակի զարգացող պահանջներին համապատասխան որակ ապահովող և կրթության բոլոր բնագավառներում հաջողություններ գրանցող, միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունների ձևավորման և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ ապահովող առաջատար հանրակրթական հաստատություն ՀՀ-ում։ Եվ քանի որ դպրոցի գլխավոր դերակատարը և առանցքային կերպարը ուսուցիչն է, հարկավոր է ունենալ ժամանակին համընթաց քայլող ամուր ուսուցչական համակազմ՝ իրենց գիտելիքները սերունդներին փոխանցելու վեհ առաքելությամբ։

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է։ Հետևելով պետության կրթական քաղաքականության միտումներին անհրաժեշտ է դպրոցում ապահովել բոլոր սովորողների կրթության մատչելիությունը և մասնակցությունը, միջնակարգ պարտադիր կրթության ապահովումը, ավագ դպրոցում գենդերային հնարավոր հավասարության ապահովում, կրթության որակի բարելավում, դասավանդող անձնակազմի մասնագիտական չափանիշների կատարելագործում (վերապատրաստումներ, տարակարգեր, կամավոր ատեստավորում), ՏՀՏ ներդրում, հանրակրթության պետական չափորոշիչի դպրոցների պահանջների իրականացում, կրթության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, համընդհանուր ներառական կրթություն, անհրաժեշտության դեպքում հեռավար կրթության իրականացում, սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ արդյունավետ աշխատանքներ, դպրոցում արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակում և իրագործում։

ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ նախորդ 3 և ընթացիկ տարվա համար

	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	Փոփոխության դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուստարվա Սկզբին	164	164	162	161	Աճ ապա նվազում

*Այս պահի դրությամբ 158 սովորող:

Աղյուսակ 2. Ընդհանուր տվյալներ մանկավարժական աշխատակազմի վերաբերյալ նախորդ 3 և ընթացիկ ուստարվա համար

	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	Փոփոխության դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր Թիվ	18	20	20	20	Կայուն դինամիկա



Աղյուսակ 3. Վարչական աշխատողների քանակը նախորդ 3 և ընթացիկ ուստարում

2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	Փոփոխության դինամիկան (աճ կամ նվազում)
2	2	2	2	Նվազում կամ աճ չկա



*Այս պահի դրությամբ՝ 2 վարչական աշխատող

Աղյուսակ 4. Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը նախորդ 3 տարիների համար

	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	Փոփոխության դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	7	5	8	6	նվազում/աճ/նվազում
31-40 տարեկան	4	4	3	3	Կայուն/նվազում
41-50 տարեկան	6	5	6	7	Նվազում/աճ/աճ
51-55 տարեկան	3	3	3	3	Կայուն
56 տարեկան և ավելի	2	2	2	3	Կայուն/աճ



ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան։

Դպրոցի կառավարման որակը բարձրացնելու համար հարկավոր է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը։ Անհարաժեշտ է զարգացնել կրթական գործընթացի մասնակիցների՝ սովորողի, ծնողի, մանկավարժական աշխատողների գործունեությունը, բարձրացնել նրանց դերը՝ անցնելով ժողովրդավար, մասնակցային, թափանցիկ կառավարման։



Դպրոցի կանոնադրության համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նախարարությունը, տարածքային կառավարման լիազոր մարմինը, կոլեգիալ կառավարման միացյալ խորհուրդը, գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը։

Դպրոցի կանոնադրությունը, մշակվելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի և օրինակելի կանոնադրության հիման վրա, սահմանել է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների գործառույթները:

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ: Դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Խորհուրդը ակտիվ մասնակցություն կունենա դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման աշխատանքներում՝ նպաստելով ֆինանսական միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

Կառավարման միացյալ խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 12-ի թիվ 245-Ա և 15.11.2021 թվականի թիվ 625-Ա որոշմամբ հաստատվել է դպրոցի կոլեգիալ կառավարման միացյալ խորհուրդը, կազմված է 14 (տասնչորս) անդամներից, վերահսկում է դպրոցի գործունեությունը՝ փոխշահավետ համագործակցելով դպրոցի գործադիր մարմնի՝ տնօրենի և խորհրդակցական մարմինների հետ: Սույն ծրագրով նախատեսվում է այդ համագործակցության շարունակականություն, թափանցիկություն՝ ի նպաստ դպրոցի առաքելության իրականացման:

Կրթության մատչելիությունը և մասնակցությունը

Կրթության համակարգի բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները: Առաջիկա տարիներին անհրաժեշտ է բարձրացնել կրթության մատչելիությունը, որը կնպաստի նաև ներառական կրթության լիակատար իրականացումը և ընդլայնումը, քանի որ հասարակության մեջ դեռևս կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բազմաթիվ երեխաներ, որոնցից շատերն ընդգրկված չեն կրթության գործընթացում:

Միջոցների շարունակական աճը և արդյունավետ մեխանիզմները

Դպրոցի զարգացման համար պետական բյուջեի միջոցներից և ձևավորվող պահուստային կապիտալից բացի անհրաժեշտ եմ համարում՝

1. ներդնել կրթության արդյունքային ցուցանիշների վրա հիմնված ֆինանսավորման գործիքներ,
2. դպրոցի կարիքները հոգալու համար (պետական միջոցներից բացի) պետք է կարողանամ լրացուցիչ ֆինանսական միջոցներ հայթայթելու գործում ներգրավել ոչ միայն բարեգործ-բարերարների, կամավոր հովանավորների, այլև տարածքների և գույքի վարձակալության, լրացուցիչ վճարովի կրթական ծրագրերի, և այլ ծառայությունների իրականացման միջոցով: Այս առումով դպրոցն ունի չօգտագործված ներուժ և հնարավորություններ:

ԸՆՏԱՆԻՔ - ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի, ուսուցչի աշխատանքն արդյունավետ է, եթե ամուր է ընտանիք-դպրոց կապը:

Անհրաժեշտ եմ համարում՝

- ✓ Ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ
- ✓ Դասղեկների միջոցով տեղեկանալ սովորողների ընտանիքների առաձնակի դժվար պայմաններին, միայն հաշմանդամ կամ գործազուրկ ծնողի խնամքի տակ ապրող երեխաների մասին
- ✓ Բարձրացնել փոխադարձ վստահության մակարդակը
- ✓ Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ և հանդիպումներ դպրոցի անձնակազմի հետ
- ✓ Ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց համագործակցությունը
- ✓ Իրազեկել դպրոցի անցուդարձին

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկնէ, ինչի մեծագույն մասը բաժին է ընկնում հենց դպրոցին և ուսուցչին:

Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- ✓ Օգնել երեխային ճիշտ հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին
- ✓ Ապահովել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ սահմանված դասղեկական պլանների վրա
- ✓ Զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը

- ✓ Սովորողների մոտ ձևավորել հարգանք լեզվի, մշակույթի, ազգայինավանդույթների նկատմամբ՝ նրան դարձնելով այդ արժեքների կրող
- ✓ Դաստարակչական գործընթացում լինել միասնական
- ✓ Դասղեկի ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր
- ✓ Ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացում
- ✓ Բացահայտել և հատուկ մանկավարժական մոտեցում իրականացնել վարքի խնդիր ունեցող երեխաների հետ
- ✓ Ընդլայնել դասարանների, նաև առանձին սովորողների ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները
- ✓ Տարբերակված մոտեցում ցուցաբերել ԿԱՊԿՈՒ սովորողներին
- ✓ Համագործակցել իրավապահ մարմինների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն գործում նրա վրա: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Այսպիսով՝ շատ կարևոր է ունենալ հարմարավետ, մոտիվացնող ուսումնական միջավայր:

Ներքին գնահատման համար կատարված հարցումն ապացուցում է, որ դպրոցում չկան սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: Երեխաները, ինչպես և նրանց ծնողները, համոզված են, որ դպրոցում իրենք լավ պաշտպանված են, դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Մշտական հոգածության առարկա է սովորողների առողջության պահպանումը: Խստորեն

վերահսկվում են բացակայությունները, ճշտվում ախտորոշումները: Պահպանվում են հակահամաճարակային կանոնները: Ախտահանվում են դասասենյակները:

Դպրոցում իրականացվել և իրականացվելու են դասասենյակների, միջանցքների, սանհանգույցների, բակի վերանորոգումներ և բարեկարգման աշխատանքներ:

Համընդհանուր ներառական կրթության պահանջներին համապատասխան դպրոցում իրականացվում է ներառական կրթություն:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- ✓ Դպրոցում ապահովել սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմաններ:
- ✓ Սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ: Համագործակցել բժշկական հաստատությունների հետ, պարբերաբար կազմակերպել անվճար բժշկական կանխարգելիչ զննումներ:
- ✓ Հատուկ ուշադրության կենտրոնում պահել ԿԱՊԿՈՒ երեխաներին:
- ✓ Հարստացնել դպրոցի սպորտային բազան:
- ✓ Սպորտի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով կազմակերպել բաց դասեր, սպորտլանդիաներ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ոլորտը՝ Դպրոցի ֆիզիկական և կրթական միջավայր

Նպատակը՝ Բարելավել պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը: Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:

Խնդիրը՝ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:

N	*Գործողություն*	*Պատասխանատու*	*Ժամանակացույց*	*Հնարավոր ֆինանսական ծախսեր*	**Ակնկալվող արդյունքները**
1.	***Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ***	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Դպրոցի բյուջե պետական բյուջե	Ապահովել բարեկարգ միջավայր
2.	***Ուսումնական հաստատության կաթսայատան վերանորոգում***	Տնօրենություն համակարգող	2023-2024թթ.	Դպրոցի բյուջե պետական բյուջե	Ջեռուցման սեզոնին ավելի բարձր ջերմաստիճանի ապահովում և դրանով պայմանավորված արտադասարանական խմբակների կազմակերպում
3.	***Ուսումնական հաստատության սանհանգույցների վերանորոգում***	Տնօրենություն համակարգող	2023-2024թթ.	Դպրոցի բյուջե պետական բյուջե	Ապահովել բարեկարգ միջավայր
4.	***Ուսումնական հաստատության կանաչ տարածքների բարեկարգում***	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Դպրոցի բյուջե պետական բյուջե	Ապահովել բարեկարգ և կանաչապատ միջավայր

5.	*Դպրոցի այգում տնկիների ավելացում*	Տնօրենություն համակարգող ԴԱԿ Դասղեկներ	2023-2028թթ.	Դպրոցի բյուջե	Ապահովել բարեկարգ և կանաչապատ միջավայր
6.	*Դասասենյակների մասնակի վերանորոգում և կահավորում*	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Դպրոցի բյուջե պետական բյուջե	Կրթական միջավայրի բարելավում և հարմարավետ պայմանների ստեղծում
7.	*Դպրոցի շենքը հնարավորինս համապատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը*	Տնօրենություն համակարգող	2023-2024թթ.	Դպրոցի բյուջե բարերարներ	ԿԱՊԿՈՒ սովորողների համար բարեկարգ միջավայրի ստեղծում
8.	*Հանդիսությունների դահլիճի գույքի ձեռքբերում*	Տնօրենություն համակարգող	2023-2024թթ.	Դպրոցի բյուջե բարերարներ	Մշակութային կյանքի աշխուժացում
9.	*18 կոմպլեկտ պահարանների ձեռքբերում*	«Հայ դպրոց» հիմնադրամ	2023թ.	«Հայ դպրոց» հիմնադրամ	Բարեկարգ միջավայրի ապահովում
10.	ԿԱՊԿՈՒ երեխաների առաջընթացի գնահատում, ԿԱՊԿՈՒ երեխաների մասնագիտական կողմնորոշման աջակցության ապահովում	Տնօրենություն Ուս. գծով տեղակալ ուսուցչի օգնականներ	2023-2028թթ.		ԿԱՊԿՈՒ աշակերտների մշտադիտարկումը կապահովի հստակ գնահատել առաջընթացը
11.	*Ընդլայնել աշխատանքները ներառական կրթության ոլորտում*	Տնօրենություն, ԴԱԿ մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028թթ.		Ներառական խնդիրներ ունեցող սաների կրթության որակի բարելավում
12.	*Տեսախցիկների տեղադրում միջանցքներում, պահակակետում, դասասենյակներում*	Տնօրենություն համակարգող	2023-2025թթ.	Պետական բյուջե, Բարերարներ	Կապահովի անվտանգ կրթական միջավայր
13.	*Ապաստարանում օդափոխության համակարգի տեղադրում*	Տնօրենություն համակարգող	2023-2025թթ.	Պետական բյուջե, Բարերարներ	Ապաստարանի պայմանների բարելավում

14.	*Ապաստարանում սանիտարական կառուցում*	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Պետական բյուջե, Բարերարներ	Ապաստարանի պայմանների բարելավում
15.	*Հակահրդեհային ազդանշանի կամ հրդեհաշիջման ավտոմատ համակարգի տեղադրում դպրոցի մասնաշենքերում և կաթսայատանը*	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Պետական բյուջե, Բարերարներ	Անվտանգ միջավայրի ապահովում
16.	*SMART գրատախտակների ձեռքբերում*	Տնօրենություն համակարգող	2023-2025թթ.	Դպրոցի բյուջե բարերարներ	Դասապրոցեսի որակի բարձրացում, մոտիվացիայի ապահովում
17.	*Ներառական կրթության լիարժեք իրականացումն ապահովող սենյակի կահավորում, հարմարավետ պայմանների ստեղծում*	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Պետական բյուջե Բարերարներ պետական բյուջե	Հարմարավետ միջավայրի ստեղծում
18.	*Արևային էներգիայի համակարգի ներդրում*	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Հովանավորներ, բարերարներ	Դրամական միջոցների տնտեսում
19.	*Մասնակցություն Սևան համայնքի Գագարին կլաստեր «Իրական դպրոցի» մասնաճյուղին*	Տնօրենություն համակարգող	2023-2028թթ.	Պետական բյուջե, Բարերարներ	Փորձի փոխանակում, հմտությունների զարգացում
20.	*Բժշկական հաստատությունների հետ համագործակցություն՝ անվճար կանխարգելիչ բուժզննման նպատակով*	Տնօրենություն	2023-2028թթ.		Աշակերտների և աշխատակիցների առողջության գնահատում և պահպանում
21.	*Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի ամբողջական անցում*	Տնօրենություն	2023-2028թթ.		Ժամանակակից պահանջներին համապատասխանեցում

	էլեկտրոնային փաթեթի				
22.	*Համագործակցություն իրավապահ մարմինների հետ*	Տնօրենություն	2023-2028թթ.		Կարգապահության ապահովում
23.	*Խրախուսել աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին*	Տնօրենություն	2023-2028թթ.		Կրթության որակի բարելավում, կարգապահության բարձրացում
24.	*Ռազմահայրենասիրական և մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում*	Տնօրեն, ուսուցիչներ, ծնողներ	2023-2028թթ.		Հայրենասիրական ոգու բարձրացում, հայրենիքի հանդեպ սիրո սերմանում
25.	*Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միջոցառումների և սպորտլանդիաների կազմակերպում*	Տնօրենություն մ/մ նախագահներ ուսուցիչներ	2023-2028թթ.		Խրախուսել առողջ ապրելակերպը, խթանել սպորտի զարգացմանը, զարկ տալ տարբեր սպորտաձևերի հանդեպ հետաքրքրությանը
26.	*Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ*	Տնօրենություն ԴԱԿ մ/մ նախագահներ դասղեկներ	2023-2028թթ.		Վարքի խնդիր ունեցող երեխաների հետ ավելի արդյունավետ աշխատանք
27.	*Սովորողների մոտ դասի նկատմամբ հետաքրքրության բարձրացում*	Տնօրենություն մ/մ նախագահներ դասղեկներ ուսուցիչներ	2023-2028թթ.		Կրթության որակի բարձրացում նոր չափանիշների ներդրմամբ
28.	*Սովորողների՝ առարկայական օլիմպիադաների մասնակցության խթանում, հաջողությունների խրախուսում*	Տնօրենություն մ/մ նախագահներ դասղեկներ	2023-2028թթ.		Կրթության որակի բարձրացում
29.	*Մանկավարժահոգեբանական աջակցող խմբի*	Տնօրենություն	2023-2028թթ.		Կարևորել մանկավարժահոգե

	դերի բարձրացում				բանական աջակցող խմբի դերը
30.	*Իրավական ակտերի լուսաբանում*	Տնօրենություն	2023-2028թթ.		Աշխատանքը դարձնել թափանցիկ
31.	*Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում /ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ/*	Տնօրենություն	2023-2028թթ.		Անհրաժեշտության դեպքում անցնցում և սահուն անցնել հեռավար կրթության
32.	*Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում*	Տնօրենություն	2023-2028թթ.		Ընթանալ ժամանակին համահունչ և համընթաց
33.	*Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ*	Տնօրենություն ԴԱԿ մ/մ նախագահներ	2023-2028թթ.		Կրթության որակի բարձրացում
34.	*Ամենամյա ինժեներական ստեղծագործության ճամբարների մասնակցություն*	Տնօրենություն ԴԱԿ	2023-2028թթ.		Խթանել կրթության որակի, մասնագիտական հմտությունների զարգացման

35.	***Կազմակերպել համերգներ դպրոցում շնորհալի աշակերտների միջոցով, Մասնակցել, սպորտային ծրագրերին «Գազարին» ծրագրի աջակցությամբ երաժշտական, ազգագրական, պարի, կերպարվեստի, արհեստների լրացուցիչ դասընթացների կազմակերպում***	Տնօրենություն ԴԱԿ մ/մ նախագահներ դասղեկներ	2023-2028թթ.		Շնորհալի սաների հայտնաբերում
36.	***Մեթոդ- կաբինետի վերաբացում, ռեսուրսների համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում***	Տնօրենություն մ/մ նախագահներ	2023-2028թթ.		Կրթության որակի բարձրացում
37.	***Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների ծնողների մասնակցությամբ***	Տնօրենություն ԴԱԿ մ/մ նախագահներ դասղեկներ համայնք	2023-2028թթ.		Սերտացնել համայնքի հետ համագործակցությունը
38.	***Անհատական աշխատանք առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների հետ***	Տնօրենություն մ/մ նախագահներ ուսուցիչներ	2023-2028թթ.		Առարկայական օլիմպիադաներում ապահովել բարձր արդյունքներ
39.	***Առարկայական մրցույթների, բանավեճերի, քննարկումների անցկացում***	Տնօրենություն ԴԱԿ մ/մ նախագահներ դասղեկներ	2023-2028թթ.		

40.	***Իրականացնել փորձի փոխանակում, դասալսումներ, այլընտրանքային կրթական ծրագրերին մասնակցություն «Գագարին» ծրագրի շրջանակներում***	Տնօրենություն ԴԱԿ Ուսուցիչներ	2023-2028թթ.		Յուրաքանչյուր աշխատանք ուղղորդել կրթության որակի բարձրացմանը
41.	***Բարելավել կրթության որակը, ապահովել բարձր արդյունքներ***	Տնօրենություն, մ/մ նախագահներ մանկավարժահոգեբանական խումբ	2023-2028թթ.		Կապահովի կրթության որակի բարձրացում
42.	**Ուսումնական այլ նյութերի ձեռքբերում՝ ըստ դասավանդվող առարկաների**	Տնօրենություն	2023-2028թթ.		Նյութատեխնիկական բազայի հարստացում
43.	**Ուսուցչի հեղինակության և դերի բարձրացում**	Տնօրենություն	2023-2028թթ.		Ուսուցչի հեղինակության և դերի բարձրացումը կապահովի
44.	**Որակյալ մասնագետների ներգրավում և ուսուցչի թափուր աշխատատեղերի համալրում**	Տնօրենություն	2023-2028թթ.		Կրթության որակի բարձրացում
45.	**Աջակցություն երթևեկող ուսուցիչներին և դպրոցի մյուս աշխատակիցներին**	Տնօրենություն	2023-2028թթ.		Ուսուցիչների, աշխատակիցների հոգսի թեթևացում
46.	**Ուսուցիչների արդյունա-վետության գնահատում և լավագույն ուսուցիչների խրախուսում**	Տնօրենություն Ուս. գծով տեղակալ մ/մ նախագահներ	2023-2028թթ.		Ուսուցչի դերի բարձրացում
47.	**Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի կարողությունների զարգացում, փորձի փոխանակում**	Տնօրենություն Ուս. գծով տեղակալ ԴԱԿ	2023-2028թթ.		Դաստիարակչական աշխատանքների որակների բարձրացում
48.	**Զինղեկի,քաղպաշտպանության շտաբի պետի,հոգեբանի, սոց.**	Տնօրենություն	2023-2028թթ.		Զինղեկի,քաղպաշտպանության շտաբի պետի,հոգեբանի,

	մանկավարժի, այլ աշխատակիցների կարողությունների զարգացում, փորձի փոխանակում				սոց. մանկավարժի, այլ աշխատակիցների կարողությունների բարելավում
49.	**Առարկայական դասավանդման պայմանների բարելավում, կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և ներգրավում կրթական գործընթացին, կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում**	Տնօրենություն	2023-2028թթ.		Առարկայական դասավանդման պայմանների բարելավումը, կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերումը և ներգրավումը կրթական գործընթացին, կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը կնպաստի կրթության որակի բարելավմանը
50.	**Աջակցել աշակերտներին առարկայական օլիմպիադաներին ավելի պատրաստված մասնակցելու, տարբեր մրցույթներին ավելի պատրաստված մասնակցելու, բուհերի ընդունելության քննություններին պատրաստվելու, մասնագիտական կողմնորոշման գործում**	Տնօրենություն ուսուցիչներ	2023-2028թթ.		Կրթության դերի բարձրացում, բարձրացնել մոտիվացիան
51.	**Կիրառել դուալ, հեռավար և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները**	Տնօրենություն	2023-2028թթ.		Ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների կիրառում, ինչը կնպաստի աշակերտների մոտ մոտիվացիայի բարձրացմանը
52.	**Նպաստել արհմիութենական կոմիտեի**	Տնօրենություն արհմիության նախագահ	2023-2028թթ.		Ապահովել գումարների շարժի թափանցիկությունը

	գործունեության արդյունավետության բարձրացմանը, գումարների շարժի թափանցիկության ապահովմանը				
53.	**Նախակրթարանի գույքի թարմացում**	Տնօրենություն Համակարգող	2023թ. հուլիս-օգոստոս	Պետական բյուջե, Բարերարներ	Նախակրթարանի դերի բարձրացում

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Հրապուրիչ և որակյալ կրթական միջավայր
2. Փորձառու և ճանաչված մասնագետներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ
3. Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջադեմ դպրոց
4. Սովորողների նախասիրություններին համապատասխան հոսքեր
5. Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց
6. Սովորողների բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում
7. Սովորողների ինտեգրում միջազգային դաշտին
8. Աշակերտների թվի ավելացում
9. ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում
10. Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն 21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքացի

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերը՝

- Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը։
- Արտակարգ իրավիճակներով պայմանավորված ոչ կայուն իրավիճակը։
- Աշակերտների թվի,դասարանների թվի նվազումը:
- Շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակասը:
- Սովորելու նկատմամբ պատասխանատվության պակաս։
- Կրթական աստիճանների անցման, դեռահասության շրջանի խնդիրների առկայություն։
- Միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում նախասիրությունների հստակեցման և մասնագիտական կողմնորոշման դժվարություն։

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար, ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում։
- Համաձարակային կանոնների պահպանում։
- Դպրոց-ծնող կապի արդյունավետության բարձրացում։
- Մասնագիտական թիմի և դասավանդող ուսուցիչների նպատակային համագործակցություն։
- Ճանաչողական այցեր դպրոցներ և միջին մասնագիտական հաստատություններ։
- Համագործակցություն համայնքի դպրոցների և կրթամշակութային հաստատությունների հետ:
- Մոտիվացնել, խրախուսել ուսուցիչներին:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատական գործընթաց է։

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները։ Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը։ Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար։

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը։

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական։

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է։ Ներքին գնահատման մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները։

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը։

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն։ Ծրագրի իրականացման վերահսկողության ամենարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են։

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետմիջոցառումներ են՝

- ✓ դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն *2* անգամ դպրոցի տվյալ ուստարվա համար ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման քննարկումն ու համապատասխան գնահատականների ամրագրումը։
- ✓ դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը։
- ✓ համայնքի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավումը դպրոցի

զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին եւ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին։

- ✓ զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհրդների կողմից։
- ✓ յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների։

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան։